Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 14

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Ա. Մարկոսյանը, Մ. Մաթևոսյանը, Գ. Արշակյանը, Մ. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Տ. Գալստյանը, Գ. Թադևոսյանը, Ա. Հունանյանը, Ա. Խաչատրյանը, Ն. Արսենյանը, Ն. Անդրեասյանը, Ս. Բաղալյանը, Բ. Վարդանյանը, Գ. Սուքիասյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալները, օգնական Ն. Գևորգյանը, մամուլի քարտուղար Ս. Ասիլյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հ. Բաղդասարյանը, աշխատակազմի բաժինների պետերի պաշտոնակատարներ:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 01.02.2022թ. N 6-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
   /Զեկուցող՝ Ս. Սահակյան/
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
   /Զեկուցող՝ Ս. Սահակյան/
4. Աշտարակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող շարժական գույքերի մասին:
   /Զեկուցող՝ Ս. Սահակյան/
5. Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու հր. 8/1 հասցեում գտնվող անշարժ գույքը ձեռք բերելու /գնելու/ առաջարկության մասին:
   /Զեկուցող՝ Ս. Սահակյան/
6. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
   /Զեկուցող՝ Ա. Արամյան/

7. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի մասին:

/Զեկուցող՝ Ա. Արամյան/

8. Ծառահատում կատարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Մխիթարյան/

9. Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը աճուրդ-վաճառքով օտարելու և մեկնարկային գին հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

10. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ոսկեվազ, Ագարակ, Փարպի և Նոր Երզնկա բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

11. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

12. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

13. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

14. Աշտարակ համայնքի Աղձք, Արուճ, Սաղմոսավան, Օհանավան և Արտաշավան բնակավայրերում այգեգործական թաղամասերը հասցեավորելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

15. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 2</u> - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 01.02.2022թ. N 6-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 01.02.2022թ. N 6-Ա որոշման հավելված 24-ը շարադրել նոր խմբագրությամբ:

Զեկուցողը նշեց, որ կատարվող փոփոխության արդյունքում վերացվելու են <<Աշտարակի քաղաքային մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում առկա անհամապատասխանությունները:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման հավելված 1-ի մեջ կատարել փոփոխություններ՝

2-րդ մասի 1-ին պարբերության

3	Աշխատակազմի գլխավոր մասնագետ	4	200000	800000
4	Աշխատակազմի առաջատար մասնագետ	2	180000	360000

տողերը փոխարինել հետևյալ տողերով՝

3	Աշխատակազմի գլխավոր մասնագետ	2	200000	400000
4	Աշխատակազմի առաջատար մասնագետ	4	180000	720000

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - Աշտարակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող շարժական գույքերի մասին

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>

օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող շարժական գույքերն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել <<Աշտարակի խմելու ջրի մատակարարման և սպասարկման>> համայնքային հիմնարկին, համաձայն հավելված 1-ի, ինչպես նաև սույն որոշումից բխող հետագա իրավական ակտերի ընդունումը վերապահել Աշտարակ համայնքի ղեկավարին:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - *Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու հր. 8/1 հասցեում գտնվող անշարժ գույքը ձեռք բերելու /գնելու/ առաջարկության մասին*

Զեկուցումով հանդես եկավ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ և 79-րդ հոդվածի 4-րդ կետերի պահանջներով, համաձայնություն տալ՝ Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու հրապարակ 8/1 հասցեում գտնվող /ծածկագիր՝ 02-001-0063-0101-001/ 41.65քմ մակերեսով շինությունը 16 700 000 /տասնվեց միլիոն յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամով /ներառյալ հարկերը/ գնելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետի պաշտոնակատար Ա. Արամյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 7-րդ, 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով,

Աշտարակ համայնքի 2022թ.-ի տարեկան բյուջեի 2-րդ և 3-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ:

Զեկուցողը նշեց, որ կատարվող փոփոխության արդյունքում կանոնակարգվում է համայնքի բյուջեի ծախսային հատվածը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի մասին*

Զեկուցումով հանդես եկավ համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետի պաշտոնակատար Ա. Արամյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38 հոդվածի առաջին մասի, <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 35/1 հոդվածի պահանջներով, ի գիտություն ընդունել 2022 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը: Ա. Արամյանի կողմից մանրամասն, թվային արտահայտությամբ ներկայացվեց առաջին եռամսյակի կատարողականը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - *Ծառահատում կատարելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Մխիթարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ծառահատում կատարելու վերաբերյալ դիմումները, հաշվի առնելով համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի եզրակացությունը, ղեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 15-րդ կետի, 51-րդ հոդվածի 1-ին կետի և 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու 7 և Ն. Աշտարակեցու 28 հասցեներում գտնվող, քաղաքացիների համար վտանգ ներկայացնող ծառերը կտրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - *Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը աճուրդ-վաճառքով օտարելու և մեկնարկային գին հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<ԱՆՏ ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի կողմից տրված 07-050-0078-0016 ծածկագրով, Նոր Երզնկա 3-րդ փողոց, N 108 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի շուկայական արժեքի վերաբերյալ 27.05.2022թ. եզրակացությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող, Աշտարակ համայնք, Նոր Երզնկա բնակավայր, 3-րդ փողոց N 108 հասցեում գտնվող 15,1քմ մակերեսով շինությունը և դրա պահպանման և սպասարկման համար առանձնացված 322քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը աճուրդ-վաճառքով օտարելու և 1 900 000 /մեկ միլիոն ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ մեկնարկային գին սահմանելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 10 - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ոսկեվազ, Ագարակ, Փարպի և Նոր Երզնկա բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 23.05.2022թ. N 68, N 69, 01.06.2022թ. N 73 և 06.06.2022թ. N 78 դրական եզրակացությունները՝ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0045-0006 ծածկագրով 0,025հա, Ագարակ բնակավայրի

02-004-0207 ծածկագրից 0,7հա, Փարպի բնակավայրից 0,7637հա և Նոր Երզնկա բնակավայրի 07-050-0107-0122 ծածկագրով 0,06հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, բնակավայրերի նշանակության բնակելի և հասարակական կառուցապատման փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի Ոսկեվազ, Ագարակ, Փարպի, Նոր Երզնկա բնակավայրերում գտնվող հողամասերի նշանակության փոփոխությունները և 1, 2, 3, 4 կետերում նշված փոփոխությունները սահմանված կարգով ներառել համայնքի հողերի հաշվառման տարեկան հաշվեկշռում:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - *Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7 հոդվածի 15-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 29 կետի պահանջներով, համաձայնություն տալ քաղաքացիների սեփականություն հանդիսացող որոշ հողամասերի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական փոփոխելուն:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով դիմումները, համաձայնություն տալ համայնքի վարչական տարածքում գտնվող մի շարք հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել:

Զեկուցողը նշեց, որ փոփոխության դեպքում նրանք պարտավոր են վճարելու կադաստրային արժեքների տարբերությունը:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի և համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով, հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 14 - *Աշտարակ համայնքի Աղձք, Արուճ, Սաղմոսավան, Օհանավան և Արտաշավան բնակավայրերում այգեգործական թաղամասերը հասցեավորելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N2387-Ն որոշման պահանջներով, Աշտարակ համայնքի Աղձք, Արուճ, Սաղմոսավան, Օհանավան, Արտաշավան բնակավայրի այգեգործական թաղամասերում կատարելու հասցեավորում: Միաժամակ Աղձք, Արուճ, Սաղմոսավան, Օհանավան և Արտաշավան բնակավայրերի քարտեզներում կատարել համապատասխան լրացումներ և ներկայացնել ՀՀ կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 15 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1] հոդվածի, ՀՀ կառավարության 12.04.2001թ. N286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1 կետի 21-րդ ենթակետի դրույթներով, թույլատրել Աշտարակ քաղաքի Ա. Մանուկյան փողոց, N 17/12 հասցեում գտնվող, քաղաքացու սեփականության իրավունքով պատկանող խանութին կից, 02-001-0105-0001 ծածկագրից 7,7քմ բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասը խանութին լրացուցիչ մուտք ապահովելու նպատակով կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ քաղաքացուն տրամադրելու 50 տարի ժամկետով՝ տարեկան 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ վճարով:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2022 թվականի հունիսի 30-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ _____

ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ _____

ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ _____

ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____

ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ _____

ԳԱԼՈՒՍՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ _____

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ _____

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ _____

ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ _____

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ _____

ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ _____

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ _____

ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն**

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ